Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

դեկտեմբերի 2025 թվականի № -Ա

ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԵՎ ՏՆՕՐԻՆԵԼԻ ՀՋՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 8-րդ մասը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №516Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոնների 108-րդ կետի 2-րդ ենթակետը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության, «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» փակ բաժնետիրական ընկերության, «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերության, «ՔոնթուրԳլոբալ Տերրա Հոլդինգս Էս-Ա-Էր-Էլ» բաժնետիրական ընկերության և «Սի-Ջի Սոլյուշնս Գլոբալ Հոլդինգ Քամփնի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2015 թվականի հունիսի 8-ին ստորագրված գույքի առուվաճառքի պայմանագիրը, Հայաստանի Հանրապետության կառավարության, «ԱՐՄՓԱՈՒԵՐ» փակ բաժնետիրական ընկերության և «Ռենկո Ս.պ.Ա» ընկերության միջև 2017 թվականի ապրիլի 27-ին կնքված՝ «Հայաստանի Հանրապետությունում՝ Երևան քաղաքի տարածքում, 250 ՄՎտ գազային վառելիքով կոմբինացված ցիկլով էլեկտրակայան նախագծելու, զարգացնելու, ֆինանսավորելու, կառուցելու, սեփականության իրավունքով տիրապետելու, գործարկելու և պահպանելու վերաբերյալ» շրջանակային համաձայնագիրը, Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև 2013 թվականի դեկտեմբերի 2-ին կնքված՝ «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի առուվաճառքի և հետագա գործունեության պայմանների մասին» համաձայնագիրը, «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերության 2025 թվականի նոյեմբերի 10-ի №ԱԱ_131_2025, «ԱՐՄՓԱՈՒԵՐ» փակ

բաժնետիրական ընկերության 2025 թվականի նոյեմբերի 3-ի №64/25 և 2025 թվականի դեկտեմբերի 1-ի №73/10, «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության 2025 թվականի հոկտեմբերի 6-ի №01/22/7347-2025 և 2025 թվականի նոյեմբերի 24-ի №01/22/8587-2025, «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության 2025 թվականի սեպտեմբերի 3-ի №211/ԱՄ, «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության 2025 թվականի դեկտեմբերի 12-ի № Ե/1/425-25 գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Հաստատել «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ», «ԱՐՄՓԱՈՒԵՐ» փակ բաժնետիրական ընկերությունների, «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության շոգեգազային ցիկլով էլեկտրական էներգիա արտադրող «Հրազդան-5» կայանի և «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության 2026 թվականի պայմանագրային և տնօրինելի հզորությունները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան կամ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից և գործում է մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
դեկտեմբերի 2025թ.